

ՀԱՅՆՐԻ ՏԵՂԱՌԱՇԵՈՒՄՆ ՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ  
ԱՄՆ-ՈՒՄ (1834—1924 թթ.)

Զ. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Հայոց պատմության անբաժանելի մասը կազմող գաղութների պատմության ողջ շղթայի հետազոտման և ամբողջացման անհրաժեշտությունից ելնելով՝ առավել քան արդիական, հրատապ ու առաջնահերթ է հայկական ամենից մեծաթիվ ու կազմակերպված՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմության համակողմանի ուսումնասիրությունը:

Հայերը նոր Երկիր են ոտք դրել դեռևս XVII դ. սկզբին: Հետագայում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական հանգամանքների բերումով հայրենի բնակավայրերից ԱՄՆ մեկնած հայերը տարածվել են ողջ երկրով մեկ և բնակություն հաստատել գրեթե բոլոր նահանգներում (արդեն 1924 թ. ԱՄՆ-ում բնակվող հայության ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 120.000)<sup>1</sup>:

Եթե սկզբնական շրջանում շուրջ շորս տասնամյակ (1834—1874 թթ.) հիմնականում ամերիկյան բողոքական քարոզիչների լուսավորչական գործունեության ազդեցությամբ օսմանյան Թուրքիայից ուսանելու նպատակով ԱՄՆ մեկնած հայերը կենտրոնացել էին գերազանցապես Նյու Յորք քաղաքում և նրա շրջակայքում, ապա հետագայում (հատկապես 1880-ական թվականներից), գաղթականության աճին զուգընթաց, ինչպես նաև աշխատանքային հանգամանքների բերումով, նրանք աստիճանաբար տարածվել են երկրի հյուսիս-արևելյան, ապա՝ հյուսիսային ու արևելյան, միջին ու միջին-տրամտյան նստավայրերում՝ հիմնական նախապատվությունը տալով քաղաքային կյանքին: Ընդ որում, նրանց տեղաբաշխումն ու բնակեցումն ԱՄՆ-ում տեղի էր ունենում որոշակի օրինաչափությամբ. սկզբնապես մեկնողները՝ ամուրի երիտասարդներն ու իրենց ընտանիքներն հայրենիքում թողած տղամարդիկ, հաստատվել են երկրի հյուսիսային և արևելյան ափերին գտնվող արդյունաբերական քաղաքներում: Հետագայում, պատմական հանգամանքների բերումով, ընտանիքների վերամիավորման անհրաժեշտությունից դրդված, կանանց ու երեխաների ժամանումով և երկրի արևելյան նահանգներում աշխատատեղերի նվազումով, նրանք շարժվել են դեպի միջին-արևմուտք և արևմուտք, ուր առկա էին աշխատանքային նոր՝ առավել բարենպաստ պայմաններ:

Առարկայական (լեզվի շիմացություն, նոր բարքերին հարմարվելու դժվարություններ, աշխատանքային բարենպաստ պայմանների առկայություն), ինչպես նաև ենթակայական (ազգային նկարագրի պահպանման և ուժացումից զերծ մնալու ձգտում) հանգամանքներից ելնելով հայ գաղթականների

<sup>1</sup> Տե՛ս R. Mirak. Armenians (Harvard Encyclopedia of American Ethnic Groups, ed. S. Thernstrom, Cambridge, London, 1981, էջ 589):

Լաժ էր հաստատվել ազգային համախումբադաքններում:

Հանձնախմբի վիճակագրական տվյալների Ի տեղաբաշխումն ԱՄՆ-ում ունեւ հետև-

-ի անհանգներում (1899—1923 թթ.)

Միսսիսիպի	24
Միսսուրի	785
Մոնտանա	15
Ցուտա	72
Նեբրասկա	22
Նեվադա	4
Նյու Հեմփշայր	599
Նյու Մեքսիկո	1
Նյու Յորք	22.800
Նյու Ջերսի	2.904
Պորտո Ռիկո	4
Ջորջիա	18
Ռոդ Այլենդ	5.828
Վայոմինգ	14
Վերմոնտ	85
Վիրջինիա	217
Տեխաս	294
Ուաշինգտոն	125
Ուիսկոնսին	1.802
Փենսիլվանիա	3.078
Օհայո	725
Օկլահոմա	16
Օրեգոն	31
Ֆլորիդա	25
Ընդամենը՝	72.237

ամերիկահայերի 90 %-ը տեղաբաշխված է՝ Նյու Յորքում, Մասսաչուսեթսում, Ռոդ հայում, Միչիգանում, Փենսիլվանիայում, Ուիսկոնսինում: Այդ նահանգների գլխաւ Յորքը, Բոստոնը, Ֆրեզնոն, Դետրոյտը, ելֆիան, Չիկագոն, Քրոյը, ինչպես նաև՝ Վլենդը, Լոս Անջելեսը, Սենթ Լուիսը, Սան Լիննը, Հարթֆորդը, Բրիչփորթը, Նյու Հե-

ին հայերը տարածվելով ամերիկյան նոր յջին-արևմտյան շրջանների, ինչպես նաև զգային կենտրոնացումներ են ստեղծել ողրական ու գործարար բազմաբնույթ ուայրերում:

յ մարդահամարը (Քեոդիկ, Ամեուոն տարեցույցը,

feretzian. A History of Armenian Immigration and Conditions in Los Angeles. A Thesis. California.

ԱՄՆ մուտք գործած հայերի զգալի մասը, հիմնականում զուրկ լինելով նյութական բավարար միջոցներից (այսպես՝ 1912 թ. նոր երկիր ժամանած 5.222 հայերի 90 %-ը ափ էր իջել առավելագույնը մինչև 50 դոլար գումարով)<sup>5</sup>, ինչպես նաև անձանոթ լինելով օտար երկրի լեզվին, կենցաղին ու բարքերին, հարկադրված էր դիմել գործավորության (1919 թ. տվյալներով Ուորքեսթեր, Փրովիդենս, Թրոյ, Քլիվլենդ, Դետրոյտ քաղաքներում հայերի 60—65 %-ը զբաղված էր գործարանային արտադրությունում)<sup>6</sup>, որից հետո, ընտելանալով օտար միջավայրին և բարելավելով իր տնտեսական ու ֆինանսական վիճակը՝ ուղի հարթել տարբեր ասպարեզներում:

Արդյունաբերական աշխատանքում ներգրավված հայերը հիմնականում կենտրոնացած էին երկրի հյուսիս-արևելյան տարածքի Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա, ինչպես նաև՝ միջին-արևմուտյան Իլինոյս, Միչիգան, Օհայո նահանգներում<sup>7</sup>:

Մասսաչուսեթսի նահանգում բնակվում էր հայ աշխատավորության ըզգալի մասը (այսպես՝ արդեն 1915 թ. այդտեղ եղած 4.239 հայերի 2/3-ը զբաղված էր արդյունաբերության մեջ)<sup>8</sup>: Նրանք աշխատում էին Ուտտրի (հետագայում՝ Ուորքեսթեր), Բոստոնի, Ուոթերթաունի, Չելսիի, Լոուրենսի, Լիննի, Քեմբրիջի, Լուուելի, Նորթբրիջի, Միլֆորդի և այլ գործարաններում<sup>9</sup>: Ուտտրը հանդիսացել է ամերիկահայ գործավորության առաջին կենտրոնատեղին: Այստեղ էր գտնվում բողոքականներ Ֆ. Մոենի և Չ. Ուոլբերնի կողմից հիմնրված մետաղաթելի հսկա գործարանը, ուր ամերիկահայ առաջին գործավորն աշխատանքի էր անցել դեռևս 1867 թ.: Հայ պանդուխտներին Ուտտրի մետաղաթելի գործարանում աշխատանքով ապահովելու նախաձեռնությունը պատկանում էր օսմանյան Թուրքիայի հայաբնակ տարածքներում գործած ամերիկացի բողոքական քարոզիչներին, որոնք գաղափարապես իրենց հարած հայերին օգնում էին աշխատանք գտնել հիշյալ գործարանում<sup>10</sup>:

ԱՄՆ մեկնած հայերի ամենամեծ մտահոգությունը աշխատանք գտնելն էր: Այն հայ գործավորները, ովքեր «խղճամիտ շաբաթավճարումներ» էին ստանում՝ 5—10 դոլար, «այլևս իրենք զիրենք փրկուած կը սեպէին», քանի որ հայրենիքում «հազիվ հազ կրնային գումարին մէկ տասներորդը շահիլ եւ հալալ հացէ մըն ալ զրկուած մնալ»<sup>11</sup>: Մինչդեռ ԱՄՆ-ում ամեն ինչ էժան ու մուտչելի էր. «եթէ բանուոր մը օրը 10 ժամ գործելով շաբաթը 20 տուար ստանար, ինքզինքը լօրտ կը հաշուէր»<sup>12</sup> և, մի քանի տարում որոշ գումարի տեր դառնալով, կարող էր վերագառնալ հայրենիք՝ իր և իր ընտանիքի քայքայված տնտեսական վիճակը բարվոքելու: Հիշյալ հայերը «ե՞թէ քաղաքացի էին, խանութ մը կը բանային, եթէ գիւղացի էին, կտոր մը հող կը գնէին»<sup>13</sup>:

<sup>5</sup> St'u R. Mirak. Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1988, էջ 77:

<sup>6</sup> St'u V. Wertsman. The Armenians in America. 1618—1976. A Chronology and Fact Book. New York, 1978, էջ 53:

<sup>7</sup> St'u R. Mirak, Ազվ. աշխ., 1988, էջ 79:

<sup>8</sup> St'u Անյոյ տեղը, էջ 78: R. Mirak, Ազվ. աշխ., 1981, էջ 141:

<sup>9</sup> St'u R. Mirak, Ազվ. աշխ., 1988, էջ 79:

<sup>10</sup> St'u Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Բ տարի, Պատոն, 1913, էջ 40, 41, Ն. Լ. Մանուկի, Ամերիկահայ գաղութի պատմութիւնը, «Պատմա-բանասիրական ինստիտուտ», Երևան, 1962, № 1, էջ 102:

<sup>11</sup> St'u Մ. Գ. Միզմեճեան, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, (1890—1925), Տրեպո, 1930, էջ 3: Վ. Հայկ, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 986:

<sup>12</sup> St'u Լ. Մարտիրոսեան, Ամերիկահայութիւնը երէկ եւ այսօր, Պէրրոթ, 1973, էջ 21:

<sup>13</sup> St'u Ասպարէզ Յիսմամեայ 1908—1958, (ա. թ.), էջ 293:

Կարճ ժամանակում մետաղաթելի գործարանում հայ աշխատավորների թիվը ստվարացել է՝ 1888 թ. կազմելով 266 մարդ, հակառակ որ, աշխատանքային պայմաններն այդտեղ սաստիկ դաժան էին<sup>14</sup>: «Ուստի սպանդանոց» անունով ճանաչված այդ գործարանը «... իր հնոցներով, իր ինքնաշարժ ձուլարաններով, իր պողպատի փուռերովն ու կտրող գործիքներով նշմարիտ դժոխքի մը տպավորութիւնը կը թողու այցելուին վրայ: Եւ իբրեւ այդ՝ հայ գործաւորութեան արիւնն ու միսը ծծելէ վերջ, անխռով հանդիսատեսը եղած է տխուր ու քստմնեցընող բանագործութիւններու, զգայացունց արկածներու, ողբերգական մահերու, տառապագին անդամահատութիւններու», իսկ «գործավորները կը նմանին այն մարդերուն, որոնք այսօր ալ ողջ մնացած ըլլալուն աղօտ երջանկութիւնը ունին...»<sup>15</sup>:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ում հայութեան թվի աճին զուգընթաց տեղի է ունեցել նաև նրանց տարածումը երկրի տարբեր արդյունաբերական քաղաքներում, ուր ներգրավվել են տեղի գործարաններում ու ֆաբրիկաներում: Օրինակ՝ Մասսաչուսեթսի նահանգի Բրոքթոն, Հեյվրհիլ, Լինն, Բոստոն, Ամսթերդի քաղաքներում հայերը հիմնականում աշխատում էին կոշիկի (Բոստոնում էր գտնվում Հուդ Ռարրի ռետինի խոշոր ընկերությունը, որը հայ գաղթականության համար ամենից ծանր տարիներին աշխատանքով էր ապահովել ավելի քան 500 մարդու), Լոուրենսում՝ բամբակե ու բրդե հյուսվածքների, Լոուելում՝ գործվածքեղենի, ֆաբրիկաներում, Ուայթինսվիլում՝ ձուլարաններում, Ռոդ Ալլենգի նահանգի Փրովիդենս և Սենթրալ ֆուլք քաղաքներում՝ մետաքսի և ներկի, իսկ Փաուլթոքեթ և Քրենսթոն քաղաքներում՝ գործվածքեղենի ֆաբրիկաներում<sup>16</sup>: Նյու Յորքի հայությունը հիմնականում կենտրոնացած էր Զիննբալ էլեքթրիքի և Շքենեքթեդի գործարաններում, Նիագարա Ֆոլզ, Մենեա քաղաքներինը՝ ալյումինի ու Արևմտյան Թրոյի երկաթի, ինչպես նաև Թրոյի օձիքի և վերնաշապիկի արտադրություններում<sup>17</sup>: Նյու Զերսիի նահանգի Փաթերտոն, Քեմդենի, Ուեսթ Հորոքեն քաղաքներում հայերը զբաղված էին ածխարդյունաբերությամբ, Միչիգանի նահանգի Դետրոյտ, Պոնտիակ, Չիկո քաղաքներում՝ ավտոմեքենաների, իսկ Գրենդ Ռեյփիդսում և Ուեսկոնսինի նահանգի Բեյսին քաղաքում՝ կահույքի գործարաններում<sup>18</sup>: Իլինոյսի նահանգի Ուոքեզըն, Ուեսթ Փուլման, Գրենիթ Սիթի քաղաքներում հայերն աշխատում էին երկաթի ու պողպատի գործարաններում, ինչպես նաև՝ Չիկագոյի սպանդանոցներում և այլն<sup>19</sup>: Ներթափանցելով երկրի հեռավոր արևմրտյան շրջաններ՝ հայերն աշխատանքի են անցել նաև Կանզասի, Արիզոնայի և այլ նահանգների արդյունաբերական արտադրություններում<sup>20</sup>:

Դարասկզբից նաև ուսական կայսրությունից մեկնած հայ պանդուխտները հիմնականում կենտրոնացած էին Միսսուրիի նահանգի Իսթ Սենթ Լուիս քաղաքի պողպատի գործարաններում, Մինեսոտայի նահանգի Սենթ Փոլ քա-

<sup>14</sup> Տե՛ս Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Արծաթեայ Յոբելեան. 1906—1931, Ա. Բատր, Բարիզ, 1935, էջ 311:

<sup>15</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Աշխ., Բ տարի, 1913, էջ 40, 41:

<sup>16</sup> Տե՛ս J. H. Tashjian. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, էջ 27, 28. A. S. Yeretzian, Աշխ., էջ 21: R. Mirak, Աշխ., 1983, էջ 79, 80, 81: Ս. Պարսամեան, Յուշարձան Զերմուկի, Պոսթըն, 1989, էջ 110: The Armenians in Massachusetts. Boston, 1937, p. 36.

<sup>17</sup> Տե՛ս R. Mirak, Աշխ., 1983, էջ 79: V. M. Malcom. The Armenians in America. Boston, Chicago, 1919, էջ 84:

<sup>18</sup> Տե՛ս V. M. Malcom, Աշխ., էջ 84. J. H. Tashjian, Աշխ., էջ 27: R. Mirak, Աշխ., 1983, էջ 79:

<sup>19</sup> Տե՛ս R. Mirak, Աշխ., 1983, էջ 79:

<sup>20</sup> Տե՛ս Աույն տեղը, էջ 80:

ղաքի երկաթուղաշինության բնագավառում, ինչպես նաև Կալիֆոռնիայի նահանգի պահածոյի գործարաններում և Ռիվրսայդի շաղախի արտադրություններում<sup>21</sup>,

Հնդհանուր առմամբ, Ուորքեսթեր, Փրովիդենս, Թրոյ, Քլիվլենդ, Լոուել, Լոուրենս, Հեյվրհիլ, Դետրոյտ և արդյունաբերական մի շարք այլ խոշոր քաղաքներում կենտրոնացած էր հայ գործավորության 60 %-ը<sup>22</sup>:

Նոր Երկրում հայ գործավորության առջև ծառայած ամենօրյա կարիքները գործարանային արտադրության մեջ էին ներգրավել ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց ու որոշակի տարիքի երեխաների: Այսպես՝ 1910 թ. ԱՄՆ-ի Գաղթականական Հանձնախմբի տվյալներով, միջին հաշվով 98 աշխատող ընտանիքների շուրջ 1/4 կամ 26 % եկամուտը գալիս էր կանանց աշխատանքից: Եվ կամ՝ Թրոյում բնակվող հայ կանանց 3/4-ը կամ 75 %-ը զբաղված էր տեղի վերնաշապիկի արտադրությունում<sup>23</sup>, 1902 թ. Լոուրենսի գործվածքեղենի ֆաբրիկայում աշխատում էին 300 հայ զգիրներ, մանողներ ու ջուլհակներ<sup>24</sup>:

Հայ գործավորներն աշխատում էին բավականին վտանգավոր պայմաններում, երբ ամեն վայրկյան առկա էր հաշմանդամ դառնալու կամ զոհ դնալու սպառնալիքը: Իսկ այդ բոլորով հանդերձ, ԱՄՆ-ի մի շարք նահանգներում (օրինակ՝ Փենսիլվանիայի նահանգ) աշխատանքային դժբախտ պատահարների դեպքում տուժած գործավորների ընտանիքներին (այդ թվում նաև ԱՄՆ-ից դուրս գտնվող նրանց ընտանիքներին) նյութական հատուցում ցույց տալու օրենք գոյություն չունի<sup>25</sup>:

Հայ գործավորն իր աշխատանքային առօրյայում ամենուրեք տեսնում էր «ածուխ ու փոշի, երկաթի պայքար, վիշապի պէս ֆշշացող մեքենաներ, բարձրաբերձ ծխնելույզներ ցցուած ամէն գիւղ ու քաղաք: Եւ ասոնց մէջ օրական 10—12 ժամ շարաշար ու քրտնաջան աշխատասիրութիւն»<sup>26</sup>:

Այդ «սատանայական գործարաններում» հայերի օրական, միջին աշխատավարձը կազմել է 1 դոլար 62 սենթ, ինչը շատ շնչին էր ամերիկացու միջին 3 դոլար 60 սենթի համեմատությամբ: Հայ գաղթականը, շաբաթական միջին հաշվով վաստակելով 7—8 դոլար, հազիվ կարողանում էր խնայել 4 դոլար, այն էլ սննդի ու բնակարանի վարձի համար<sup>27</sup>: Այնպես որ, «... հայ գործաւորը իր և իրենների գոյութիւնը ապահովելու և օրավարձի մինիմումով բավականանալու համար դիմեց աներևակայի միջոցների և ինքնսզրկումների, որոնց չէ կարող ենթարկւել ոչ Իրլանտացի, ոչ Ռուս, ոչ Իտալացի և ոչ էլ որևէ գաղթական գործաւոր»<sup>28</sup>: Այդ առիթով աշխատավճարման հարցերով զբաղվող ժամանակի ականավոր ամերիկացի գիտնական Փ. Ռոբերտսն ասել է. «Եթե տեղացի միջին ընտանիքը մեր մեծ քաղաքում ապրեր օրական 1 դոլար 50 սենթով, ապա տասներկու ամսվա մեջ հեղափոխություն կլիներ, սակայն հազարներով օտարածին ընտանիքներ ապրում են կարիքի

<sup>21</sup> Տե՛ս Աուլն տեղը, էջ 79:

<sup>22</sup> Տե՛ս Ed. Minasian. The Armenian Immigrant Tide. From the Great War to the Great Depression (Recent Studies in Modern Armenian History. Cambridge, 1972, էջ 110):

<sup>23</sup> Տե՛ս R. Mirak, Ազվ. աշխ., 1981, էջ 141: R. Mirak, Ազվ. աշխ., 1983, էջ 86:

<sup>24</sup> Տե՛ս «Կոչնակ», 19. X. 1907, 16. XII. 1911:

<sup>25</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, 1912, Պոստոն, էջ 194:

<sup>26</sup> Տե՛ս Մ. Գ. Միզմեան, Ազվ. աշխ., էջ 2:

<sup>27</sup> Տե՛ս R. Mirak, Ազվ. աշխ., 1981, էջ 141: R. Mirak, Ազվ. աշխ., 1983, էջ 88:

<sup>28</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ազվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 194:

ու զրկանքի մեջ»<sup>29</sup>։ Մինչդեռ տեղական լեզվին անծանոթ հայր չէր հանդըգնում գործարանատիրոջից պահանջել աշխատանքի հավելում, քանի որ արդյունքում ունեցածն էլ կկորցնեի։ Այդուհանդերձ, հայ աշխատավոր գաղթականների տարեկան միջին աշխատավարձը գաղթական այլ ազգային ներկայացուցիչների աշխատավարձի համեմատությամբ զգալի չափով ավելի բարձր էր, քանի որ, ի տարբերություն վերջիններիս, հայերը սեզոնային բանվորներ չէին, այլ, առանց հայրենիք վերադառնալու, աշխատում էին գրեթե ողջ տարին<sup>30</sup>։ Ահա թե ինչու, համեմատաբար բարձր էր նաև հայ ընտանիքների տարեկան եկամուտը. 1920 թվին այն միջին հաշվով կազմել է 730 դոլար։ Նույն թվականի տվյալներով, արդյունաբերական Նոր Անգլիայի տարածքաշրջանում հայերը տասնամյակների իրենց քրտնաջան աշխատասիրության շնորհիվ զբաղվածության աստիճանով ևս գերակշռել են մյուս օտարազգիներին<sup>31</sup>։

Հայ պանդուխտ աշխատավորները, որոնք գալիս էին հիմնականում միջին կարողության ընտանիքներից, և սկզբնական շրջանում մեծ մասամբ նպատակ չուներին մշտական բնակություն հաստատել Նոր Երկրում, այլ ձրգտում էին որոշ ժամանակ աշխատելուց ու բավարար դրամ ձեռք բերելուց հետո վերադառնալ իրենց հայրենի օջախները, բնիկ ու այլազգի բանվորների համեմատությամբ շին դժգոհել աշխատանքային ծանր պայմաններից և ցածր աշխատավարձից, քանի որ հոգեբանորեն իրենց շին համարել բանվոր դասակարգի մի մաս։ Իսկ պարբերական ջարդերի հետևանքով ԱՄՆ հասած հայ գաղթական աշխատավորները, որոնք «ամբողջովին մերկ, անօթի և թըշուառ վիճակում (էին— Ք. Ա.) բառի ընդարձակ իմաստով»<sup>32</sup>, առաջնորդվելով «գոյության խնդրով», գործադուլների ժամանակ շատ հաճախ «գործ գտնելու համար... գործատերին առաջարկում են ստոր գնով իրենց ֆիզիքական ոյժը, փոխարինելով, գործաթողներին»՝ դրանով իսկ դառնալով գործարանատիրոջ «ուզած» մարդը, իսկ տեղացի բանվորների համար՝ «ատելի»<sup>33</sup>։ «Պահեստի բանտրական զօրքի» վերածված այդ հայերը, որոնց անգլերեն անվանում էին «սքեք» (գործադուլարեկ), առաջին անգամ նման քայլի դիմել են 1890 թվին, որից հետո «գործադուլ արելու» միջոցով աշխատանք ձեռք բերելու այդ ձևը տարածվել է հայ անգործ գաղթականների շրջանում<sup>34</sup>։ Հայերն աշխատանքի էին ընդունվում չափազանց նվազ, շատ հաճախ՝ գործադուլավորների նախկին վաստակի 1/3-ից էլ պակաս աշխատավարձով, ինչին չէր համաձայնվի ոչ մի ամերիկացի (այսպես՝ 1893 թ. ճգնաժամի ժամանակ Ուորքեսթեր բերված զգալի թվով հայեր աշխատում էին, օրական 85—90 սենթ աշխատավարձով՝ նախկին աշխատավորների 3—4 դոլար օրականի դիմաց<sup>35</sup>։

Հայ աշխատավորների մեջ դասակարգային գիտակցության բացակայությունը, որն ուներ առարկայական (հայրենիքում բանվորության բացակայությունը) և ենթակայական (գործարանը՝ որպես ժամանակավոր աշխատատեղ դիտելը, Նոր Երկրում տնտեսական ու հասարակական կյանքին հար-

<sup>29</sup> R. Mirak, Գշվ. աշխ., 1988, էջ 86:

<sup>30</sup> Տե՛ս Ն. Լ. Մանկունի, Գշվ. աշխ., 1962, էջ 101: R. Mirak, Գշվ. աշխ., 1988, էջ 85, 86:

<sup>31</sup> Տե՛ս V. M. Malcom, Գշվ. աշխ., էջ 86—87: V. Wertsman, Գշվ. աշխ., էջ 57: Ed. Minasian, Գշվ. աշխ., էջ 110:

<sup>32</sup> Տե՛ս Մուշեղ Եսիսկոպոս, Գշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 193:

<sup>33</sup> Տե՛ս Ակն-Խանց, Հայերն Ամերիկայում, Աթեճք, 1898, էջ 7, 9, 10:

<sup>34</sup> Տե՛ս Աույն տեղը, էջ 6:

<sup>35</sup> Տե՛ս R. Mirak, Գշվ. աշխ., 1988, էջ 90:

մարվելու առօրյա հոգսերը) դրդապատճառներ, հիմք էր դարձել դարասկզբ-բին տեղացիների շրջանում հայերի հեղինակության անկման:

Տարիների ընթացքում, հասարակական ու պատմական իրադարձությունների փոփոխման հետևանքով, ինչպես նաև հայ քաղաքական կուսակցությունների գաղափարախոսների բացատրական աշխատանքների շնորհիվ, հայ գործավորների շրջանում ևս սկսել է ձևավորվել դասակարգային գիտակցությունը՝ ներգրավելով նրանց աշխատավորական ելույթների՝ գործադուլների, ցույցերի ու պիկետների: Դա առանձնապես նկատելի էր 1910-ական թվականներից սկսած, այսինքն՝ երբ աստիճանաբար մարել էր հայ գաղթականների շրջանում հայրենի օջախները վերադառնալու հույսը, և ԱՄՆ-ը վեր էր ածվել նրանց մշտական հանգրվանի:

Պանդխտության սկզբնական շրջանում հարկադրաբար գործավորական կյանքն ընտրած հայ գաղթականների զգալի մասը, տաժանակիր ու համառ աշխատանքի շնորհիվ փոքրիշատե բարվոքելով իր տնտեսական վիճակը, հարմար պատեհության դեպքում հեռացել էր գործարանից և ներգրավվել իր կարողութանն ու հմտությունը համապատասխանող արհեստանոցներում կամ՝ փոքրիկ խնայողություններով սեփական գործ հիմնել: Այնպես որ, արդյունաբերական արտադրության մեջ ներգրավված աշխատավորներից բացի (1899—1917 թթ. ԱՄՆ-ում կար 10.829 հայ բանվոր)<sup>36</sup>, հայերի շրջանում զգալի թիվ են կազմել նաև որոշակի հմտությունների տիրապետող արհեստավորներն ու մանր խանութպանները. կոշկակարները, դերձակները, հյուսները, ոստայնագործները, երկաթագործներն ու պողպատագործները, վարսավիրները, հացթուխները, գրագիրները, որմնադիրները, մսագործները, գոհարագործները, մետաղագործները, թիթեղագործները, ապակեվաճառները, մեքենագործները, մեքենավարները, կաշեգործները, ժամագործները, ծխախոտագործները, նպարավաճառները, տպագրիչները, ներկարարները, լվացարարները, հագուստավաճառները, քաղցրավաճառները, ճաշարանատերերը, իջևանատերերը և այլք: Ընդհանուր առմամբ, 1899—1917 թթ. վերոհիշյալ հայերի թիվն ԱՄՆ-ում հասնում էր 14.026-ի<sup>37</sup>, որոնք հիմնականում կենտրոնացած էին երկրի արևելյան ափի խոշոր քաղաքներում: Այս հայերն իրենց և իրենց ընտանիքների գոյությունը պահպանելու, ինչպես նաև Նոր Երկրի մրցակցային պայքարին դիմակայելու և առաջընթաց ունենալու համար հարկադրված էին գրեթե ողջ շաբաթը 10—14 ժամ օրնիրուն աշխատել խղճուկ պայմաններում՝ ծանր օդի մեջ, թույլ լույսի տակ և ցածր վարձատրությամբ<sup>38</sup>:

Ամերիկահայերի շրջանում մեծ թիվ են կազմել նաև գործարարները: Այսպես՝ 1899—1917 թթ. ԱՄՆ-ում կար հայ 1.117 առևտրական, 17 հյուրանոցի, 9 բանկի, 8 գործարանի սեփականատեր և այլն<sup>39</sup>: Ընդ որում, առևտրականությունը, հատկապես մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, առավելապես մենատիրաբար զբաղվել է երկու հիմնական ասպարեզներում. երկրի արևելյան ափամերձ շրջանում՝ արևելյան գորգի (ներմուծման 70—80 %-ը կատարվում էր հայերի կողմից)<sup>40</sup>, իսկ արևմտյան շրջանում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառահանություններ:

Բացի արևելյան գորգի մեծածախ առևտրից, հարյուրավոր գաղթական

<sup>36</sup> Տե՛ս V. M. Malcom, Աշվ., աշխ., էջ 81—82:

<sup>37</sup> Տե՛ս Աույն տեղը, էջ 81—82:

<sup>38</sup> Տե՛ս «Հայրենիք», 7. V. 1912:

<sup>39</sup> Տե՛ս V. M. Malcom, Աշվ. աշխ., էջ 81—82:

<sup>40</sup> Տե՛ս A. S. Yeretzian, Աշվ. աշխ., էջ 21:

հայեր ներգրավված էին նաև մանրածախ գորգարտադրության, գորգի վերանորոգման, լվացման, ինչպես նաև համապատասխան դազգահների արտադրության բնագավառներում: Արդեն 1915 թ. ԱՄՆ-ում կային արևելյան գորգի 75 խոշոր հայկական ընկերություններ և 200-ից ավելի վերանորոգման փոքր արհեստանոցներ<sup>41</sup>:

Եթե ԱՄՆ-ի արևելյան տարածքում բնակություն հաստատած հայերն առանձնապես մեծ հաջողությունների էին հասել արևելյան գորգի ներմուծման, վաճառքի, արտադրության ու վերանորոգման ասպարեզներում, ինչպես նաև զբաղված էին համատեղ աշխատանք պահանջող գործարանային արտադրություններում, ապա արևմուտքում՝ ներգրավված էին ազգային նրկարագրին առավել հոգեհարազատ գյուղատնտեսական արտադրության մեջ, ուր գերակշռում էր անհատական աշխատանքը: Այս առումով, նրանց զբաղվոր կենտրոնատեղին երկրի արևմտյան ափին գտնվող Կալիֆոռնիայի տարածաշրջանն էր, և հատկապես նահանգի սրտում գտնվող Սան Ուոգին հովիտը: Կալիֆոռնիայում բնակություն հաստատած հայերի զգալի մասը՝ 86 %-ը ժամանել էր ԱՄՆ-ի արևելյան և կենտրոնական արդյունաբերական շրջաններից (այսպես՝ մի վիճակագրության համաձայն, Ֆրեզնո մեկնած միջին հաշվով 192 հայերից 165-ը կամ 84 %-ը նախկինում 5—7 տարի բնակվել էր երկրի վերոհիշյալ տարածքներում, իսկ Ֆրեզնոարենակ հայազգի 67 տղամարդկանցից 31-ը կամ 46 %-ը արդյունաբերական հիշյալ տարածքների նախկին գործավորներ էին)<sup>42</sup>:

Իսեռևս անցյալ դարավերջին Կալիֆոռնիայի նահանգի Սան Ուոգին հովիտն անապատ էր, «գետերը առանց այստեղով հոսելու օվկիանոսն էին հոսում... հողը արժեք չունեւր»<sup>43</sup>: Սան Ուոգին հովիտն անապատից դրախտի վերածելու հրկարամյա ու դժվարին գործում Կալիֆոռնիայի նահանգի առաջին վերաբնակիչների շարքում իրենց անգնահատելի ավանդն են ներդրել նաև ամերիկահայ գաղթականները, որոնք իրենց քրտինքը խառնելով գետերի հետ, ոռոգելի ու մշակելի էին դարձրել ամայի տարածությունները: Սկզբում հող ձեռք բերելը դժվար շէր. յուրաքանչյուր քաղաքացի կարող էր կառավարությունից անվճար վերցնել 160 ակր (1 ակրը=4.060 մ<sup>2</sup>) հող: Տասնամյակների ընթացքում 1 ակր հողի արժեքը կես դուարից աճել էր մինչև 100, ապա նաև՝ 700—800 և ավելի դուարի<sup>44</sup>:

12 գավառներից բաղկացած Սան Ուոգին հովտի կենտրոնը Ֆրեզնոն էր, որը, հիմնականում շնորհիվ այդտեղ մեծամասնություն կազմող հայերի քրտնանաջան աշխատանքի, «ղաշտին ամենահարուստ ու ծաղկյալ մասն է և նահանգիս բոլոր գավառները կը գերազանցէ»: Բացի Ֆրեզնոյից, հայ երկրագործները հաստատվել են նաև Ֆաուլերում, Րիդլիում, Փարլիերում, Սենկրում, Քինգզբուրգում, Տայնուպայում, Սելմայում, Խերլիում, Խուլարայում, Եղմմում, Օրոսայում, Սուլթանայում, Վայսիլիայում, ինչպես նաև Լոս Անջելեսում, Ռեդլենդում, Իմփերիալ Վելիում և հարակից այլ շրջաններում<sup>45</sup>:

Երկրի արևելյան նահանգներից, ապա նաև աշխարհի հայաբնակ այլ վայրերից գյուղատնտեսական Կալիֆոռնիա ժամանած սահմանափակ կարողության տեր և մինչ այդ հողագործական աշխատանքի փորձ չունեցող հայերը (1898—1929 թթ. ԱՄՆ մուտք գործած 53.000 հայերից միայն 22,8

<sup>41</sup> Տե՛ս R. Mirak, Գշվ. աշխ., 1983, էջ 406:

<sup>42</sup> Տե՛ս R. Mirak, Գշվ. աշխ., 1981, էջ 141: R. Mirak, Գշվ. աշխ., 1983, էջ 118:

<sup>43</sup> Տե՛ս Մուշեղ Եսիսկոպոս, Գշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 222:

<sup>44</sup> Տե՛ս Աույն տեղը, էջ 222, 228:

<sup>45</sup> Տե՛ս Աույն տեղը, էջ 224:



%-ն էր նախկինում զբաղվել գյուղատնտեսական աշխատանքով)<sup>46</sup> սկզբնական շրջանում բախվել են բազմաթիվ տնտեսական դժվարությունների: Շատերը դրամ վաստակելու նպատակով 12—16 ժամ իրենց հողատարածքներում աշխատելուց հետո, աշխատում էին նաև հարևանների տնտեսություններում: Նախապես զուրկ լինելով հողատարածքներ կամ այգիներ գնելու հնարավորությունից, հայերի մեծ մասն օրական միջին հաշվով 2 դոլարով վարձվել է որպես հողագործական աշխատավոր, մինչ մյուսները վարձակալել են զգալի շահով հողատարածքներ<sup>47</sup>:

Տրեզնոյում բազմաթիվ հայեր, հիմնականում՝ կանայք և երեխաներ, ներգրավվել են գյուղատնտեսական ապրանքների փաթեթավորման պահեստավորման աշխատանքներին՝ գերակշիռ թիվ կազմելով ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչների համեմատությամբ (այսպես՝ 1917 թ. տվյալ ասպարեզում տեղի աշխատողների 15 %-ը հայեր էին): Թեև աշխատանքը հեռու էր հաճելի լինելուց, իսկ աշխատավարձը խիստ ցածր էր (օրական 10-ժամյա աշխատանքի դիմաց՝ 2—2,5 դոլար), այնուամենայնիվ, այն թույլ էր տալիս հայերին հայթայթել իրենց ընտանիքների ապրուստը և խնայել որոշակի գումար: Աստիճանաբար, գյուղատնտեսության մեջ ներգրավված, և օտարազգի գաղթականների համեմատությամբ շահավոր ծախսեր կատարող հայ ընտանիքը համառ ու դժվարին աշխատանքի շնորհիվ դարձել է տան, անասունների, բանջարանոցի և այլնի սեփականատեր՝ վերածվելով ազատ ֆերմերների, և նվազեցնելով վարձու աշխատանք կատարողների թիվը (այսպես՝ 1908 թ. Տրեզնոյում խաղողահավաքման աշխատանքներին ներգրավված 838 հոգուց ընդամենը 25-ն էր հայ, այսինքն՝ 3 %-ը)<sup>48</sup>:

Տարիների ընթացքում հայերն իրենց ձեռքն էին վերցրել նահանգի լավագույն հողատարածքներն ու այգիները, որտեղ հիմնական մշակությունը խաղողն էր: Այսպես՝ եթե դարասկզբին Տրեզնոյի և Թուլարայի հայերն ունեին ընդհանուր առմամբ 10.000 ակր հող՝ 2 մլն. դոլարի արժողությամբ, ապա արդեն 1922 թ. այն կազմել է 37.555 ակր՝ ավելի քան 30 մլն. դոլարի արժողությամբ, ընդ որում, յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ միջին հաշվով 20—40, երբեմն նաև՝ 80 ակր հողատարածք<sup>49</sup>: Իսկ ողջ Սան Ուոգին հովտում 1908 թ. հայերի ձեռքում էր կենտրոնացած 25.000 ակր հողատարածք, այսինքն՝ ընդհանուրի 3/5 մասը<sup>50</sup>:

Կալիֆոռնիայի նահանգի հայերը խոշոր ներդրում են ունեցել տեղի գյուղատնտեսության զարգացման գործում: Նրանց էին պատկանում որոշ մշակություններ (ծնեբեկ, ձմերուկ, սպիտակ ադրիատիկ և զմյուռնիակալիս թուզ, պարսկական, կասաբայի, դիարբեքիթի, ֆուրբակալ, հայկական և այլ տեսակների սեխ և այլն) առաջին անգամ նահանգ ֆերմուծած և դրանք յուրատեսակ մեթոդներով աճեցրած լինելու, ինչպես նաև՝ վերամշակելով, դրանք շորացնելու ու մթերման համար փաթեթավորելու պատիվը:

Ամերիկահայերի ձեռքում էր կենտրոնացած նաև Կալիֆոռնիայի նահանգի խաղողի մշակությունը: 1891—1904 թթ. նրանք գնել էին խաղողի

<sup>46</sup> Տե՛ս Ch. Mahakian. History of Armenians in California. A Thesis. California, 1935, էջ 96:

<sup>47</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ազգ. աշխ., Ա տարի, 1912, էջ 229, 231:

<sup>48</sup> Տե՛ս R. Mirak, Ազգ. աշխ., 1988, էջ 117, 120:

<sup>49</sup> Տե՛ս Ch. Mahakian, Ազգ. աշխ., էջ 20: Մուշեղ Եպիսկոպոս, Ազգ. աշխ., Ա տարի, 1912, էջ 225—226: Արշալոյս պատկերազարդ տարեգիրք, պատրաստեց Ա. Մելիքեան, Գ տարի, Տրեզնո, 1922, էջ 57:

<sup>50</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ազգ. աշխ., Ա տարի, 1912, էջ 224: R. Mirak, Ազգ. աշխ., 1988, էջ 119:

մի շարք այգիներ Ֆրեզնոյի տարածքում, սեփականացրել՝ 10.000 ակր Սան Ուոգին հովտում, այսինքն՝ շամիչի և գինու արտադրութեան համար նախատեսված ամբողջ 94.600 ակր հողատարածքի 10,5 %-ը: Ֆրեզնոյում շամիչ արտադրողների 1/4-ը կամ շուրջ 25 %-ը հայեր էին<sup>51</sup>: 1908 թ. խաղողի մշակութեան համար հայերի ձեռքում էր կենտրոնացած 16.000—20.000 ակր հողատարածք կամ՝ ողջ շամիչի արտադրութեան 1/6-ը<sup>52</sup>: Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի տվյալներով, հիշյալ բնագավառում հայերը շատ ավելի հաջողակ էին, քան նույնիսկ Կալիֆոռնիայի գյուղատնտեսական ասպարեզում մեծ համբավ ունեցող ճապոնացիները, քանի որ կարողացել էին արագ կերպով հարստանալ՝ շնորհիվ իրենց աշխատասիրութեան, գործարար հարակցության և խելամիտ տնտեսելու կարողությունների: Թեև անսպասելի փոթորիկներն ու տեղատարափ անձրևները պատճառ են հանդիսացել, որ առատ բերքը բերեմն փշանա, բայց և այնպես, համբերատար հայ հողագործը լավագույն հեռանկարների հույսով հաղթահարել է դժվարությունները՝ ընդհուպ մինչև 1920-ականների սկզբին վրա հասած տնտեսական ճգնաժամը, երբ շատ շատերը հարկադրված էին հեռանալ Ֆրեզնոյից:

Կալիֆոռնիայի հայերը զբաղվել են նաև բլրուրի արտադրությամբ և երկրով մեկ դրա վաճառքով, ինչպես նաև՝ նարնջի, ծիրանի, ելակի, տարբեր տեսակի բանջարեղենների, հատապտուղների մշակությամբ, ծխախոտագործությամբ, գինեգործությամբ և այլն:

Բացի հողագործական աշխատանքներից, Սան Ուոգին հովտի հայերը ներգրավվել են նաև հանքագործության մեջ՝ մասնակցելով նավթի, արջապի արդյունահանմանը և այլն, մյուսներն արհեստավորներ էին, խանութպաններ, գործարարներ:

Այսուհանդերձ, գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված հայերի թիվը զգալի չափով գերազանցել է ոչ գյուղատնտեսականին (օրինակ՝ 1897 թ. Ֆրեզնո քաղաքի գյուղական հատվածը կազմող 329 հայերից ընդամենը 0,18 %-ը, այսինքն՝ միայն 54 մարդ էր զերծ գյուղական աշխատանքից և ներգրավված այլ աստիճաններում)<sup>53</sup>:

Ընդհանուր առմամբ, Կալիֆոռնիայի հայերի նյութական վիճակը շատ ավելի բարենպաստ էր, քան երկրի արևելյան և միջին արևմտյան նահանգներում բնակվողներինը, քանի որ առաջինները ազատ էին ձեռքով վառելիքի և տաք հագուստեղենի համար անհրաժեշտ ծախսերից, վաստակած գումարով կարողանում էին բավարարել կենցաղային պահանջները և զգալի խրանալողություններ կատարել:

Ամերիկաբնակ հայերի ուսման նկատմամբ ունեցած սերն ու մասնագիտական կրթություն ձեռք բերելու անհուն ցանկությունը խթանել են հարյուրավոր արհեստավարժ ամերիկահայերի ի հայտ գալը: Նրանց շարքում մեծ թիվ են կազմել ուսուցիչները, հոգևորականները, հայալեզու և անգլիալեզու թերթերի խմբագիրները, դասախոսները, ինժեներները, գյուտարարները, ֆիզիկոսները, քիմիկոսները, բժիշկները, քանդակագործները, արվեստագետները, երաժիշտները, ճարտարապետները, իրավաբանները, ապահովագրական ընկերությունների կամ կալվածքների գործակալներն ու այլ մասնագիտությունների տեր մարդիկ (1899—1917 թթ. ԱՄՆ-ում կար 782 արհեստավարժ հայ)<sup>54</sup>: 1920 թ. տվյալներով ԱՄՆ-ում կային հայազգի շուրջ 100

<sup>51</sup> St'u Ch. Mahakian, Ըշվ. աշխ., էջ 24, 25:

<sup>52</sup> St'u R. Mirak, Ըշվ. աշխ., 1988, էջ 118—120, A. S. Yeretzian, Ըշվ. աշխ., էջ 84:

<sup>53</sup> St'u Մուշեղ Եպիսկոպոս, Ըշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 81:

<sup>54</sup> St'u V. M. Malcom, Ըշվ. աշխ., էջ 81—82:

հոգևորականներ, որոնցից 39-ը քարոզում էին ամերիկյան ժողովարաններում, ավելի քան 200 բժիշկներ ու ատամնաբույժներ և 15 իրավաբաններ, որոնց հաճախորդների մեծ մասը ամերիկացիներ էին, ինչը վկայում էր նրանց ունեցած բարձր որակավորման մասին: Ամերիկյան առաջնակարգ կոլեջներում և համալսարաններում դասավանդում էին մեկ տասնյակից ավելի հայ դասախոսներ ու պրոֆեսորներ (Հարվարդի ատամնաբուժական դպրոցի ռազմական վիրաբուժության պրոֆեսոր, Լիհայի օրգանական քիմիայի և Փենսիլվանիայի համալսարանի ֆիզիկայի պրոֆեսորների օգնականներ, Միչիգանի համալսարանի բժշկական դպրոցի և Յելի համալսարանի դասախոսներ և այլն)<sup>55</sup>:

Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1899—1917 թթ. ԱՄՆ-ում կային 12.453 առանց զբաղմունքի հայեր, որոնց մեծ մասը կանայք էին և բարձր տարիքի երեխաներ<sup>56</sup>:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի հայերն իրենց երկարամյա քրտնաջան աշխատանքի, ինչպես նաև շահավոր, համեստ ու տնտեսող ապրելակերպի շնորհիվ հասել էին զգալի հաջողությունների, բավականաչափ կարողության տեղ դարձել՝ էապես բարելավելով իրենց տնտեսական ու կենցաղային պայմանները:

Ամերիկահայերն իրենց կենսամակարդակով և ապրուստի միջոցներով գրեթե շնչ տարբերվել ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչներից: Ունևորներն ու բարեկեցիկ կյանք, ինչպես նաև միջին եկամուտ ունեցողները բնակվել են երկրի խոշոր և գլխավոր քաղաքների լավագույն ու հարուստ թաղամասերում: Նրանք հիմնականում սեփականացրել էին իրենց տները (արևելյան ու կենտրոնական նահանգներում՝ 8,6 %-ը, Կալիֆոռնիայում՝ 75 %-ը)<sup>57</sup>, ունեին լավագույն մակնիշխ: Երեխաներն, շքեղ կահ-կարասիներ, շատերն անշարժ գույքի խոշոր և բնականատերեր էին: Նրանց երեխաները հաճախում էին լավագույն մասնավոր դպրոցներ, ուսանում կոլեջներում ու համալսարաններում: Մինչդեռ նոր ժամանած կամ ցածր վարձատրվող գաղթական հայերը, ինչպես նաև թոշակով ապրողները հարկադրված էին բնակվել արդյունաբերական քաղաքների ետ բնկած ու աղքատ թաղամասերում՝ կենցաղային ու սանիտարական վատթար պայմաններում: Նրանք բնակվում էին խիտ խմբված և շօղափոխվող սենյակներում՝ առանց էլեկտրական հոսանքի, լուսավորության համար օգտագործում էին գազի լամպեր, իսկ կերակուրը պատրաստում էին փայտի վառարանների վրա կամ՝ դրսում: Հատկապես անբարենպաստ էր լոսանջելիսարնակ արևելահայ գաղթականների ընկերային-տնտեսական վիճակը: Կատարելով ստորակարգ աշխատանքներ և վաստակելով ցածր աշխատավարձ, նրանք ստիպված էին բնակվել հետամնաց թաղամասերի էժան կացարաններում՝ երկու տասնյակ և ավելի հայրենակիցների հետ մի սենյակում խմբված: ԱՄՆ-ի Գաղթականական Հանձնախմբի 1915—16 թթ. հաղորդումներում խիստ կերպով քննադատվել են հայերի կենցաղային հակասանիտարական պայմանները, վատ կառուցված ու կեղտոտ տները: Հաճախ հիշյալ անբարենպաստ ապրելաձևը լուրջ թշնամանքի տեղիք է տվել հայերի և այլազգի գաղթականների միջև՝ պատճառ դառնալով բազմաթիվ խտրական ընդհարումների, հրբեմն նույ-

<sup>55</sup> St'u V. Wertsman, Աշվ. աշխ., էջ 57, V. M. Malcom, Աշվ. աշխ., էջ 96—97:

<sup>56</sup> St'u V. M. Malcom, Աշվ. աշխ., էջ 81—82:

<sup>57</sup> St'u Աույն տեղում, էջ 132:

նիսկ՝ խոչընդոտել հայերի ազատ տեղաշարժը դեպի բնակութեան համար առավել պատվաբեր ու հարմարավետ տարածքներ<sup>58</sup>:

Ամերիկահայերի ընկերային-տնտեսական պայմաններից բխում էր նաև համապատասխան առողջական վիճակ, որը նույնպես քիչ էր տարբերվում ամերիկաբնակ այլ ազգերի առողջականից: Հիվանդութուններն ու մանուկների մահացության տոկոսն առավելապես բարձր էր ցածր կենսամակարդակ ունեցող, այսինքն՝ կենցաղային ու աշխատանքային վատթար պայմաններում ապրող ու աշխատող հայերի շրջանում: Ամերիկահայ այդ խավերի մեջ լայն տարածում էին ստացել թոքախտը և թոքային այլ հիվանդություններ, որոնք հիմնականում հարվածում էին ծանր գործավորական աշխատանքներում ներգրավվածներին: Հետևաբար երկրի արևելյան արդյունաբերական գործարաններում իրենց առողջությունը քայքայած շատ ու շատ գործավորներ թե՛ բժիշկների խորհրդով, թե՛ անձնական նախաձեռնությամբ հետզհետե հեռանում էին դեպի արևմուտք՝ դեպի մեղմ ու բարեխառն կլիմա ունեցող Կալիֆոռնիայի նահանգ:

ԱՄՆ-ի հայերի շրջանում բարձր էր նորածինների և մինչև մեկ տարեկան երեխաների մահացության տոկոսը: Դա հետևանք էր մոր և մանկան նկատմամբ նախածննդյան ու հետծննդյան բավարար խնամքի բացակայության (այսպես՝ դարասկզբին միայն Ֆրեդնոյում մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը կազմել է քաղաքի համապատասխան հայ բնակչության գրեթե 25 %-ը)<sup>59</sup>: Ընդհանուր առմամբ, 1920 թ. ամերիկյան մարդահամարի տվյալներով, ԱՄՆ-ում ծնված հայ երեխաների թիվը կազմում էր 36.625<sup>60</sup>:

Ամերիկահայ ընտանիքը որպես ընկերային միավոր հատկապես իր գոյության սկզբնական շրջանում փոքր թիվ էր կազմում: Աստիճանաբար նոր երկրի ապրելակերպին ընտելանալը, ինչպես նաև հայրենի երկրում առկա քաղաքական ու տնտեսական պայմանները պատճառ են հանդիսացել վերադարձող հայերի ու նաև ամուրիների թվի նվազման՝ մեծացնելով ընտանիքներն ԱՄՆ փոխադրողների, ապա նաև ամբողջ ընտանիքներով գաղթողների թիվը: Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1909 թ. 30—44 տարեկան տղամարդկանց շրջանում ամուսնացածներն ու այրիացածները կազմել են ավելի քան 75 %, իսկ 45 և բարձր տարիք ունեցողների շրջանում՝ ավելի քան 90 %-ը<sup>61</sup>: Փոքրաթիվ, սակայն տարեցտարի աճող էին օտարների հետ հայերի ամուսնությունների ցուցանիշները (հատկապես ավետարանական, արհեստավարժ ու գործարար հայերի շրջանում)՝ նաև այլազգի գաղթականների համեմատությամբ (100 ամուսնությունից ընդամենը 9,63 %՝ եվրոպացիների համապատասխան 10—50 %-ի դիմաց)<sup>62</sup>: Ամերիկաբնակ այլազգի գաղթականների համեմատությամբ հայերի շրջանում ամուսնալուծությունների ցուցանիշները ևս ցածր էին:

Ամերիկահայ ընտանիքը բազմանդամ էր. միջին հաշվով բաղկացած էր 4—6 անդամներից, որտեղ գլխավոր դերը պատկանում էր տղամարդուն: Միաժամանակ, նոր երկրի տնտեսական ու հասարակական պայմանները նպաստել են նահապետական հայ կնոջ կերպարի էական փոփոխությանը: Այդտեղ՝ օտարության մեջ, մեծացել էր նրա տեղն ու դերը ոչ միայն ընտանի-

<sup>58</sup> Տե՛ս R. Mirak, Ըշվ. աշխ., 1983, էջ 192, 193:

<sup>59</sup> Տե՛ս Գույճ տեղում, էջ 135:

<sup>60</sup> Տե՛ս Ն. Լ. Մանկուճի, Ըշվ. աշխ., 1926, էջ 588:

<sup>61</sup> Տե՛ս R. Mirak, Ըշվ. աշխ., 1983, էջ 150:

<sup>62</sup> Տե՛ս Գույճ տեղը, էջ 154—155:

քում, այլև՝ աշխատանքում ու համայնքի կյանքում, քանի որ նա հոգում էր ընտանիքի ոչ միայն տնտեսական, այլ նաև հոգևոր կարիքները: Նրա ուսերին էր դրված ձուլման և օտարացման համայնակուլ միջավայրում զավակների հայեցի դաստիարակութայն դժվարին ու կարևոր պարտականությունը. «... Հայ կինը ինչպէս ամեն տեղ ու ժամանակ, այստեղ ալ մեծ սատարն ու աւանդուպահը եղած է Հայ լեզուին, մանաւանդ Հայ կրօնի պահպանմանը»<sup>63</sup>: Ամերիկահայ կրտսեր սերունդն ավագ սերնդից ժառանգելով պարկեշտութայն ու ակնածանքի, արժանապատվութայն ու հպարտութայն, աշխատասիրութայն ու ցանկացած ձեռնարկած գործի նկատմամբ պատասխանատրվութայն բարձր գիտակցութայն զգացում և առաքինի այլ հատկանիշներ, ոչ միայն դրանք կիրառել է կյանքում՝ հանդիսանալով օրինավոր քաղաքացիներ նոր որդեգրած երկրի համար, այլ նաև՝ ավանդել հաջորդ սերունդներին, օտարութայն մեջ մշտապես անարատ պահելով իր ազգային նկարագիրը:

Աշխատասեր ու գործունյա ամերիկահայը ծանր ու համառ աշխատանքից հետո կարողանում էր նաև լավագույն կերպով կազմակերպել իր և իր ընտանիքի հանգիստը՝ ինչպես ըստ նախասիրությունների, նույնպես և՛ հաճախելով ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, ակումբների, հարանվանական եկեղեցիների կողմից կազմակերպված հավաքների, հանդիսությունների, փիկնիկների և այլն, որոնք ոչ միայն օտարութայն մեջ ազգապահպան դեր էին կատարում, այլև իրականացնում հայրենանպաստ ձեռնարկներ (հանգանակություններ և այլն) հօգուտ հեռավոր Մայր Հայրենիքի և կարոտյալ ժողովրդի:

Այսպիսով, տնտեսական, քաղաքական և այլ հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում ԱՄՆ մուտք գործած հայերը բնակություն են հաստատել լայնածավալ երկրի գրեթե ողջ տարածքում և ներդրավել իրենց հնարավորություններին, կարողություններին ու նախասիրություններին համապատասխանող տարբեր զբաղմունքներում՝ աստիճանաբար համակերպվելով նոր կյանքի պայմաններին ու բարքերին, կենցաղին ու սովորույթներին, այսուհանդերձ շնորհակալ իրենց ազգային կերտվածքն ու նկարագիրը և մշտարթուն պահելով կապը հայրենի երկրի ու ժողովրդի հետ:

**К. Р. АВАКЯН — Расселение и социально-экономическая жизнь армян в США (1834—1924 гг.).**—Армяне на протяжении многих десятков лет, прибывая в Соединенные Штаты Америки, расселялись по всей стране, почти во всех тех штатах, где имелись заводы и фабрики, фермы и другие сферы производства и бизнеса. В 1923 году 90% американских армян проживало главным образом в десяти штатах страны (Нью-Йорк, Массачусетс, Род-Айленд, Иллинойс, Калифорния, Мичиган, Пенсильвания, Нью-Джерси, Коннектикут, Висконсин).

В соответствии с их возможностями, способностями и интересами — армяне США вовлекались в различного рода промыслы: на востоке страны работали главным образом на заводах и фабриках, а на западе — в сельском хозяйстве.

Постепенно приспособляясь к новым условиям жизни и нравам, американские армяне тем не менее не утратили свой национальный дух и облик, будучи всегда в контакте с родной страной и народом.

<sup>63</sup> Տն՝ս Մոռելի Եպիսկոպոս, Ոչվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 217: